ԽՄԲԵՐԳՆԵՐ



ՓՐՕՖՖ-ԳԱԼՖԱԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Նուագ՝ Փրօֆֆ-Գալֆաեան

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում։
—Ալէլուիա!
զՄարմին իւր տայ մեզ՝ կերակուր, եւ սուրբ զարիւն իւր
ցօղէ ի մեզ։
—Ալէլուիա!
Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք ըզ լոյս։
—Ալէլուիա!
Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի՛ քաղցր է Տէր։
—Ալէլուիա!
Օրհնեցէք ըզՏէր յերկինս։
—Ալէլուիա!
Օրհնեցէ՛ք ըզՆա ի բարձունս։
—Ալէլուիա!
Օրհնեցէ՛ք ըզՆա, ամենայն հրեշտակք Նորա։
—Ալէլուիա!
Օրհնեցէ՛ք ըզՆա, ամենայն զօրութիւնք Նորա։
Ալէլուիա! Ալէլուիա! Ալէլուիա!

ՎԵ՛Ր ԿԱՑ

Նուագ՝ Փրօֆ-Գալֆաեան

Վե՛ր կա՛ց, թշուառ վշտի զաւակ,
Վանէ՛ թախիծդ անյուսութեան.
Շուտ կը հասնի քեզ երկնառաք
Ձեռքն հայկական սուրբ Միութեան:

Սովն էր տիրած խեղճ Հայորդուն տընակը,
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը:
Հացի վերջին պատառն հատած էր արդէն,
Եւ յուսահատ՝ դիմումներէն դէս ու դէն՝
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը:

Վե՛ր կա՛ց, թշուառ վշտի զաւակ,
Վանէ՛ թախիծդ անյուսութեան.
Շուտ կը հասնի քեզ երկնառաք
Ձեռքն հայկական սուրբ Միութեան:
Վե՛ր կա՛ց, թշուառ վշտի զաւակ:

ՓԱ՛ՌՔ ՔԵԶ, ՀԱՅԱՍՏԱՆ

Խօսք եւ Նուագ՝ Փրօֆ-Գալֆաեան

Արարատեան Հայոց աշխարհ, Երեւան, } Կրկ.
Մատա՛ղ ըլլամ քո սուրբ հողին պատուական: }

Փա՛ռք քեզ, ո՛վ նոր Հայաստան,
Փա՛ռք քեզ, ո՛վ մեր նոր Ոստան:
Փա՛ռք քեզ, Յուսոյ Վառարան,
Փա՛ռք վեհ Կամքիդ անվարան:
—Փա՛ռք քեզ, Հայաստան: (Կրկ.)

Արարատեան Հայոց աշխարհ, Երեւան, } Կրկ.
Մատա՛ղ ըլլամ քո սուրբ հողին պատուական: }

Փա՛ռք քեզ, ո՛վ Ազգ Նահատակ,
Փա՛ռք սուրբ հոգւոյդ անապակ:
Փա՛ռք մեր քաջաց անվեհեր,
Փա՛ռք ձեզ, սուրբեր անձնուէր:
—Փա՛ռք քեզ, Հայաստան: (Կրկ.)

ԼԱՑԷ՛Ք

Նուագ՝ Փրօֆֆ-Գալֆաեան

Լացէ՛ք, մայրե՛ր։ Լացէ՛ք, քոյրե՛ր։
Հայոց երկինք սուգ է պատեր։
Լացէ՛ք, մայրե՛ր։ Լացէ՛ք քոյրե՛ր։ } կրկ.

Շալկած Հայի ծո՛վ ծով ցաւեր,
Գացիր, որ ա՛լ չի լան մայրեր։
Բայց, դեռ լացող աչքեր շա՛տ կան։
Գացիր անդարձ, ա՛խ Սիմոն ջան,
—Ա՛խ Սիմոն ջան։

Լացէ՛ք, մայրե՛ր։ Լացէ՛ք, քոյրե՛ր։
Հայոց երկինք սուգ է պատեր։
Լացէ՛ք, մայրե՛ր։ Լացէ՛ք, քո՛յրե՛ր։
—Լացէ՛ք, Հայե՛ր։

ԱՊՐԻ՛ ՀԱՅԱՍՏԱՆ

Խօսք եւ Նուագ՝ Փրօֆֆ-Գալֆաեան

Արի՛ք, Հայե՛ր, սէ՛ր եղբայրներ,
Ձեռն ի ձեռին, անբաժան միշտ,
Օ՛ն, քալե՛նք յառաջ։
Հանապազ, ամենուրեք,
Սրտով եւ կամ յաւուր տօնի,
Գոչենք միաբան՝ }
«Ապրի՛ Հայաստան»։ } կրկ.

Ջերմ մեր հայրըն Հայկ եւ քաջըն Վարդան,
Յուսանք առ Աստուած, նախնեաց մեր պաշտպան։
Արքայն արքայից, պիտի տայ մեզ Նա՝
Յաղթանակ, զօրութիւն։—Օվսաննա՛։

Արի՛ք, Հայե՛ր, սէ՛ր եղբայրներ,
Ձեռն ի ձեռին, անբաժան միշտ,
Օ՛ն, քալե՛նք յառաջ։
Հանապազ, ամենուրեք,
Սրտով եւ կամ յաւուր տօնի,
Գոչե՛նք միաբան՝ }
«Ապրի՛ Հայաստան»։ } կրկ.

ԵՐԳ ԱՌԱՒՕՏՈՒ

Նուագ՝ Փրօֆ.-Գալֆաեան

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛։

Բղխումն ի Հօրէ,
Բղխեա՛ ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտող զիս արա՛։

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բա՛ց,
Դասեցո՛ վերնոցն։

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա՛։

Զարթի՛ր Տէր յօգնել,
Զարթո՛ ըզթըմբրեալս,
Զուարթնոց նմանիլ։

ԱՍՏՈՒԱԾ ՊԱՀԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Խօսք եւ Նուագ՝ Փրօֆ.-Գալֆաեան

Ո՜վ մեր հայրենիք, դու՝ հանուր ազգաց չքնա՛ղ ոստան }
Աստուած պահէ՜ քո նուիրական անունըդ՝ Հայաստան։ } (Կրկ.)

Հեռացէ՛ք, սեւ սուգի եւ լացի տխրագին օրեր, }
Հեռացէք առ յաւէտ, յոյսերով լի պիտի գան նորեր։ } (Կրկ.)
Հայաստա՜ն, Հայաստան, կը զոհենք քեզ՝ տուն ընտանիք,
Ի՞նչ կ'արժէն կեանք ու ինչք մեր, առանց քեզ,
սուրբ հայրենիք (Կրկ.)

Ո՜վ մեր հայրենիք, դու՝ հանուր ազգաց չքնա՛ղ ոստան, }
Աստուած պահէ՜ քո նուիրական անունըդ՝ Հայաստան։ } (Կրկ.)

Բա՛ց աչքերդ, Հայորդի, եւ նայէ՛—մե՛րն է Հայաստան }
Թո՛ղ կորչին նախանձորդք—մե՛րն է տունը, մե՛րն է } (Կրկ.)
բուրաստան։ }
Հայաստա՜ն, Հայաստան, սուրբ խորան Ցեղին եւ տաճար,
Թո՛ղ փայլին խնդութեան մեր ժըպիտները՝
բերկրապատար (Կրկ.)։

Ո՜վ մեր Հայրենիք, դու հանուր ազգաց չքնա՛ղ ոստան, }
Աստուած պահէ՜ քո նուիրական անունըդ՝ Հայաստան։ } (Կրկ.)